

Ugurnalstulsi

ՀԱՅ Ժողովրդի յառաջ-
դիմութիւնը մեր Հան-
է, իոկ Հայոց ազատու-
թիւնը ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է . . . :

Ուստի Հրաւիրեալ էք յա
դանօք ներկայ լինիլ այս կարեւ
գումարման՝ կատարելով ձեր ս
դասիրական պարտականութիւն
Ի դիմաց Յանձնախմբ

Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԱԴԱՅԻՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ

Խմբագիր—Տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ Թ. ԷԿՆԻՍԻԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Առաջին Կարգի

Տարեկան Մեկ Թուր

Ո՛ր և է ծարիր կամ գրություն
ուղղել հետևեալ հասցեին

TO THE AZADOUTIUN,
12 Frankfort St.,
New York City, U.S. A.

Azadoutiun,
LIBERTY.

Published every month
By

Azadoutiun Publishing Company

12 Frankfort St.,
NEW YORK CITY.

H. ECUINIAN,

Editor.

SUBSCRIPTION PRICE, free of postage, \$1.00 a year

Entered at the New York Post Office as
second class mail matter.

Նոյն ԵՈՐԳ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1891

Տաճկաց բառարանին մէջ
արդարութիւն բառը խորհուրդ
ութեան կը նշանակէ:

Այն ամէն անձին որք
Տաճկին մի քիչ սիրելու կամ
զայն կանգնելու յաւակնու-
թիւն ցոյց կուտան, Տաճկիէ
մը նուազ ատելի մարդիկ չեն
կրնար սեպուել:

Տաճկին ատելի է մեզ,
ոչ թէ Հայ ազգն հարատահա-
րելուն համար միայն, այլ ու-
րովհետեւ ունի իր մէջ ատ-
ուելու այն ամէն յատկու-
թիւններն որք իրաւամբարդս
կը հաւասարեցնեն ստորին
անբաններու աստիճանին, եւ
որք ընդհանրապէս մարմնա-
ցած կը տեսնուին Օսմանցի
անձնաւորութեանց մէջ յա-
ճախ:

«Երբ շատ մը մահը մտե-
նայ հովուին հացը գործաւոր
կենքէ» կըսէ Հայկական ա-
ռածն, որոյ վրայ հիմնելով
մեր խօսքն կրնանք իրաւամբ
հետեւեցնել թէ արդարեւ մտե-
ցած է մահն և այն դուրե-
րուն որք գաղթականութեան
հովուին երկաթեայ գաւա-
զանը յալիտակելու են եւ-
լած, կարծելով թէ գաւազան
կրնն բաւական է հովու լինե-
լու համար: Բայց արդեւք ա-
տենք չեն գիտեր թէ որոնք
արժանիք կրնան ունենալ հո-
վու-բաշ լինելու Հայ ազգին
համար:

Շատեր յանդիմանելով
տաճ են զմեզ այլ և այլ ժա-
մանակ ըսելով թէ Հայը լոկ
գիտէ լալ ու գանգատիլ, եւ
ասոր իրը ապացոյց մեր երե-
սին զարկած են յաճախ այն
պատգամներն որք իրենց
եւ այլ առթիւ զրկուած են դա-
նազան կողմեր: Թէ սա կար-
ծիք որչափ անիրաւ է Հայ
ազգն արդեւ ցոյց տուած է
շատ առթիւ, եւ այսօր կրկին
անգամ ցոյց կուտայ իւր Ամե-
րիկեան դաղձկանութեան
միջոցաւ, որ կը փութայ
չնորհալով լինիլ Պարսից Վեհ:
Շահին անոր արդար վարչու-

թեան համար: այն գիր զոր
մտաւ որք կը զրկեմք Պարս-
կաստան, ոչ բռնութեամբ
ստորագրուած է եւ ոչ ալ
չաջու համար պատրաստուած,
այլ Հայ արտերու անկեղծ շնոր-
հակալաց արտայայտութիւնն
է պարզապէս:

Ի հարկէ սա ցոյց կուտայ
թէ Հայը ուսած չէ միայն լալ
եւ գանգատիլ, այլ Հայը գի-
տէ ի հարկին շնորհակալ լի-
նիլ Սակայն տարակոյս չկայ
թէ քիչ ատենէն պիտի գայ
այն օրն յորում մեզ զրպար-
տող այս մարդիկ պիտի չիկ-
նին և ամբողջար ըլլան տես-
նելով նորէն որ հեղ ու խա-
ղաղանք Հայը առիւծ կըս-
րած: «Իր բաղուններով սկսած
է իւր իրաւունքներն պաշտ-
պանել...»:

ԱՆՍԵՆԻ ԽՈՒՄԻՍԻՏԻՆԵՐ

Ի ՏԻԳՐԱՆԱԿԵՐՍ

ՀԱՅ ՆԱԶԵՑԵԼՈՅ ՄԼ ՄԱՐԿԻՆ
ԱՂՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ
ԱՆՍԵՆԻ ՄԻՋ:

Հետեւեալ նամակն, որ
ծանօթ պատճառներու համար
ուշ հասած է հոս, Նիւ Ճէրլի
Նահանգին մէջ բնակող մեր
բարեկամներէ միոյն զրկուած
է մեզ յանձնուելու համար ի
հրատարակութիւն: Չայն կը
հրատարակեմք՝ առանց մեր
կողմանէ դիտողութիւն մը ա-
ւելցնելու, վասն զի դէպքն
ինքնին բաւական է մեր ըն-
թերցողաց խորին ուշադրու-
թեան արժանանալով անոնց
զայրոյթն գրգռելու համար:

Տիգրանակերտ 9 Յունիս 1891
Ժամը ութն է այժմ (ըսի
թիւրք), թղթաւորը կը մենի
մէկ ժամէ մը վերջ. ուստի աճա-
պարանօք կը գրեմ հետեւեալ զար-
հուրելի դէպքն որոյ ելքը յայտ-
նի չէ տակաւին:

Այս առաւօտ ննջեցաւ մը
ուշիքը, որ Մարիամ անունով
աղքատ Հայ կին մէկ իւր քա-
ռասուն եւ հինգ տարեկան:
Ննջեցաւ մարմինն պիտի ամ-
փոփուէր մեր արեւմտեան գե-
րեզմանատան մէջ, որ պարսպէն
դուրս կը գտնուի իւր միւր քա-
ռորդ մղոն հեռավորութեամբ,
մեծ ճանապարհին մօտիկ: Հարկ
է ըսել թէ հիւսիս գերեզմա-
նատուն երթալու համար ան-
հրաժեշտ է անցնիլ տաճկաց Մե-
լիք Աճմէտ անուն թաղին որոյ
բնակիչք իրենց վարպետութեամբ
նշանաւոր հանդիսացած են քա-
ղաքի մէջ ի սկզբանէ ի վեր:

Եկեղեցիէն արձակուելէ վերջ
ննջեցելոյն ազգականք, երկու
սեռէ բաղկացեալ իւր քսան ան-
ձինք, իրենց սիրելի զաւգալին
հետեւեցան անոր թաղման հան-
գիսին ներկայ գտնուելու հա-
մար: Յուդարկաւորք երբ Մելիք
Աճմէտի նշանաւոր արձարանին
ստիւն հասան, տաճիկ շատ մը
լակոսներ սկսեցին քարկոծել Հայ-
ոց բաղձութիւնն ու ննջեցեալը
միանգամայն, ի հարկէ իրենց մե-
ծերէն դրդեալ, զի այս վերջինք
փոխանակ արգելելու այդ խայ-
տառակութիւն, ծիծաղելով ի-
րենց լակոսները կը քաղկերէին:

Հայ ազաւորք իրենց ցաւին
վրայ նոր ցաւեր չաւելցնելու հա-
մար՝ այս սովորական դէպքն չի
տեսնուելու դարձելով՝ աճապարհա-
նօք անցնիլ սկսեցին այդ վտան-
գաւոր փողոցներէն՝ բոլոր մը ա-
ռաջ քաղաքէն դուրս ելնելու հա-
մար: Բայց այս խոհեմութիւնն
ո՛ր և է օգուտ չի տուաւ, այլ ընդ-
հակառակն աւելի սաստկացուց
ինչորքն, անանկ որ ամէն կողմէ
քար, հող ու փայտ անզալ սկսե-
ցան յուղարկուող բազմութեան
է ննջեցելու դադարին վրայ: Այս
վիճակաւ բազմութիւնն վերջա-

պէս մօտեցաւ քաղաքի դրան, ուր
հասնելէ վերջ կը յուսար ազատած
լինիլ այդ սովորական քարկոծու-
թեանէն:

Բայց ընդհակառակն խնդիրն
աւելի ծանրացաւ, ըստ որում
փոխանակ տաճիկ լակոսներուն՝
անոնց մեծերը հրապարակ ելան
խուռն բազմութեամբ: Յուդար-
կաւորք ճիշդ քաղաքի դրան մէջ
էին երբ այս վայրենիք վրայ հա-
սան և ստիպեցին դադարեցնել իրենք
որ իրենց բնօրը գետնը դնեն:
Սոքա ընդդիմացան նախ, և ուս-
տի կանոնաւոր դաժնակութիւնն
սկսեցաւ մէջ լիտի թրքերէն տմանք
Հայ կանանց վրայ յարձակեցան,
զորս գանձակոծելէ եւ նեղելէ
զատ ըռնի... րեւ սկսեցին գա-
նալ: Հայ համաւոր իրաւական սեռն
չի կրնալով դիմանալ այս նա-
խառնաց, փախչիլ սկսեց շնչա-
պառ: Այս պահուստ արք եւ կը շար-
չարուէին արդէն վայրագ բազմու-
թեան կողմանէ: աւելորդ է ըսել
թէ սոքա եւ ճարահատեալ իրենց
ազատութիւնն փախուստի մէջ
որոնցին: Պահ մը վերջ ոչ մի
քրիստոնէս կը մնար այդ տեղ
բացի ննջեցեալին որ անհող կը
ննջէր իւր դադարին մէջ ընդդիմ
անդիմացող իւր չուրջ տեղի ու-
նեցած վայրագութիւններուն: Ան-
խիղճ և դադարաբար խուժան
դեռ գոհ եղած չէր իւր ըրած-
ներով, ուստի անոր անարդ ձեռ-
քերն ննջեցեալին կը մօտենան:
մէկ բուլի մէջ դժբաղք հանգու-
ցելոյն պատանքը պատառ պատառ
կը լինի, որոյ երեսին վրայ ամէն
կողմէ... լեւ և այլ ամէն տեսակ
աղտութիւններ լեցնել կուտին...
..... Առտուած իմ, ալ զրիչս
յառաջ չեմք արք շարունակելու հա-
մար... ամօթ, հաղորդ նախա-
տիքք այն եւրպական քրիստոն-
էս ազգաց որք ուղղակի պատա-
ճառ ու պատարկանատու են այս
մեր քաղաք աղէտից:

Երբ ննջեցեալն այդ նախա-
տալից վիճակին մէջ թողուլով
Թուրքերն ցրուիլ սկսեցին՝ Հայք
լուր առած լինելով դժմարուե-
ցան հոն տեղ, առանց սակայն
դպրու ննջեցելու դադարին:

Մի քանի աղբեցիկ թրքեր վը-
րայ գալով այս միջոցին քաղց-
րութեամբ խրատել սկսեցին ժո-
ղովուրդն որ ամենիմպալէս վերցնին
ննջեցեալն եւ լուսնով զոյն թա-
ղումը կատարեն, բայց հատարա-
կութիւնն մերժեց զայդ ընել:
Յիշեալ տաճիկներն՝ տեսնելով
խնդրոյն փառաբար կայտնութիւնն
փորձեցին ըռնիլ թաղել տալ նըն-
ջեցեալն դիւղայի քահանայի մը
ձեռք, բայց չի յաջողեցան՝ ժո-
ղովուրդի հաղորդութեան տեսնելով:

Այս սոսիքը դրած պահուս-
տակները տակն ի վերայ կը լի-
նին, շատ խանութները գոցուած
են: Ս. Կիրակոս եկեղեցին բազ-
մաթիւններ լեցուած է, ամէն տեղ
խօսքի առարկայ է այս զար-
հուրելի դէպք, որոյ նման՝ ծե-
րերու վկայութեանց նայելով՝ տե-
ղի ունեցած չէր թեաւ Տիգրա-
նակները մէջ, թէ եւ գիւղերէն
նոյն տեսակ դէպքերու լուրեր
առնուած են շատ անգամ: Նոյն
խալ Սրբիւրդներու և Եփեսոսի
թաճմանով, երբ քրիստոնէսաց
ննջեցելու մը մարմինն՝ կատալա-
րաթիւններ մը մէջ դնելով ընդ քաղ-
քուր կը հանեն եղբր քաղաքէն
գերեզմանատուն ամենելու համար,
այսպիսի դէպք մը պատահած չէ,
որչաք որ լուծ և կարգացած
նախ քաղաքի մէջ գրուած հին
գրչապիտու յիշատակարանաց
մէջ:

Ճիշդ ժամը ութ և կէս է. այս
բուլիսն ստացած լուրերուն նայե-
լով դեռ ննջեցեալն նոյն նախա-
տալից վիճակին մէջ գրուած կը
կենայ քաղաքի դրան մէջ՝ մեծ
բազմութեամբ շրջապատուած, և
դեռ չի գիտարկի ինչ պիտի լինի
այս դէպքին ելքն, որ ի հարկէ
պիտի անդեկադրեմք ձեռք յու-
սալով որ պիտի յանձնէք հրա-
տարակութեան:

ԱՄԹԵՆԻՆ

Յ. Գ. Նամակն գոցած ժամա-
նակ կը լսեմ թէ կառավարու-
թեան հրամանաւ մի քանի քննիչ

պաշտօնեայնք և ոստիկանք
զրկուած են յիշեալ վայրն ըն-
ջեցեալն անկէ փոխադրելու եւ
ձերբակալութիւններ ընելու հա-
մար: Բայց այժմէն կը
րեւի է գուշակել այդ ձեռն-
դրութեանց սովորական հե-
տեւութիւնն:

Ուրիշ շատ դէպքերու մէջ
տեղական կառավարութիւնն նոյն
ըրած է իւր թէ արդարութիւն
գործելու համար, բայց ամէն
անգամ տաճկական անիրաւու-
թիւններն դաժնատուած եւ քա-
ղաքուած են, երբեմն դատա-
րանաց անտարբերութեամբ եւ
երբեմն ալ ուղղակի քաղաքի
տալով խուժատու անիրաւին:
Եւ ո՞ր չի կրնար այժմէն դիտնալ
թէ այս դէպքն ալ մի քանի ձեռ-
ակերպութիւններէ վերջ պիտի
լուծուի վերջապէս ի վնաս Հայ
հատարակութեան:

ՍԿԱՐԻՆ ԳԻՐ ԶԵՆՈՒՄՈՅ Պ
ՄԱՐԿԻՆ

Մեք չի պիտի զբաղենք ներ-
կայ յօդուածով ներկայացնել
մեր ընթերցողաց սկզբունքի
նշանակութիւնն կամ անոր
սահմանն, եւ ոչ ալ պիտի
ժամանանք սա կէտի վրայ թէ
մարդիկ սկզբունքի պարտին
ժառայել, եթէ կուզեն իւր
մարդ պարել ընկերակաճու-
թեան մէջ, եւ վերջէն յարգ-
ու պատու հասարակութեան
կողմանէ:

Մեր ներկայ յօդուածի
նպատակն է ցոյց տալ մեր
ընթերցողաց կամ ճանչցնել
անոնց այն կարգի մահկանա-
ցունքներն որք սկզբունքի մը
չեն ծառայել, այլ ամէն ան-
գամ հովի հասանքին առջեւ
կը փոխեն իրենց դիրքը, ձեռն
ու հաւատքը, ի հարկէ աւե-
րորդ պիտի նկատուի յաւելու-
նալ թէ անվայել է, և կըր-
նանք աւելի յառաջ երթնալով
ընել թէ անմտութիւն է այս
կարգի անձինք ճանաչելէ վերջ
հաւատ ընծայել անոնց, եւ
կամ լաւ եւ է ըսել բռնաւոր
անոնց ծուղակին մէջ, որ անձ
նախան շահու համար պատ-
րաստուած կը լինի ընդհան-
րապէս:

Վերացական բառերով մեք
նպատակ չունենալով անակղ-
բունք անձանց սահմանն գծե-
լու, պիտի բաւականանանք
երբեմն երբեմն օրինակներ ա-
ռաջ բերել ընթերցողաց դա-
նակներ լուսաւորելու համար
եւ տարակոյս չունենք թէ
այսպիսի փառանքներ մատնա-
նիլ ընելն օգուտէ հեռի չի
պիտի կրնայ ըլլալ:

Հոս հարկ է ուղղակի
ընել նախ թէ երբ մէկը հա-
տուտ համոզում մը կը գոյացնէ
իւր մէջ և ատոր ետեւէն քալել-
իսկսի ամենայն յոգճմտու-
թեամբ, կենսիկ պայմաններէ
մին կատարելով անձ է, եւ
երբ օր մը փորձով իւր ընտրած
ճանապարհի սխալ լինն տես-
նելով ճշմարտութեան դառ-
նայ, նա անսկզբունք մէկը չի
կրնար նկատուիլ ըսաւ. բայց
սա գիտնալու է թէ ոչայսիսի
փոփոխութիւն մը կենսիկ մէջ
մէկ անգամէն աւելի չի կրնար
պատահիլ ընդհանրապէս, բայց
այս մարդը որ ամէն վեց ամիսը
անգամ մը նոր մի ճանապարհ
կընտրէ իրեն քալելիք, մին
միւսին գիտնալով հակառակի
սկզբունքի չի ծառայողի մը
օրինակն կրնայ նկատուիլ:
Բայց սակայն երբ այսպիսիք
իրենց ուղղին իւր ճշմարտու-
թիւնն քողարկուել կընեն ընդ-
հանուր ժողովրդեան, յայն-
ժամ զիջելով զմիւս ի վերայ մե-
ղաց. և այսպիսի պարագայն
լու մէջ ժողովրդի լրագիրնե-

րուն անկէ դառնով զարդն և
աշխարհի ցոյց տալ անոր ար-
ժանիքն՝ յօդուտ հասարակու-
թեան, վասն զի ճշմարտու-
թիւն մ'է թէ անսկզբունք մե-
կը կրնայ գործել ամէն չարիք
յարմարելով առթի և ժամա-
նակի բերմանց: Այն մարդն որ
իւր հաւատքն ու համոզումն
կը փոխէ միշտ, ամենավտան-
գաւոր ցեղ մ'է ապականիչ,
մարդկային ընկերակաճութեան
մէջ, ուրիշ զայն դուրս վանե-
լին առաքելութիւն մ'է ան-
կառնած, եւ ինչպէս կարելի է
խտաճիլ և հատալ այդ կար-
գի անձանց խօսքին ու քարո-
զին երբ իրենք իսկ իրենց քա-
ղաքին երկար ատեն հա-
ւատք ընծայելու գրից մէջ
չեն կրնար գտնուիլ, վասնզի
կը կենդանի կամ չունեն մտա-
ւորական այն հարցովութիւն-
ներն որք հարկաւոր են ճշմար-
տութիւնն շփոթելու համար:

Արդարեւ ցաւալի է որ
մեր ազգին միջոցաւ միւս փո-
քը թիւ մը չեն կազմեր. նոյն
խալ մեր ալիք գաղթականա-
նութեան մէջ կան շատեր որք
իրենց չի գիտցածն ու չի
հաւատացածն սորվցնելու են
երած, բայց տարակոյս չկայ
թէ ծածու չար լարի պտուղ
ոչ տանէ, թէ եւ ժողովուրդն
կը խորուի շատ անգամ:

Զգալի օրինակ մը մէջ ըս-
ելու համար աւելորդ չենք
սեպել հոս մատնանիլ ընել մի
անձ, որ սակէ իւր վեց տարի
առաջ Ամերիկայ եկաւ, թուրք
կառավարութեան վայրագու-
թիւններէն աղաւտ մնալու հա-
մար: Այս մարդ հոս ծայրա-
յիւզ պահպանողական դար-
ձաւ, անանկ որ աղաւտութիւն
բառը հնչել իսկ չէր համար-
ձակեր հրապարակել վրայ, չէր
տարներ այսպէս անցնել
վերջ, օր մը կարծես արթն-
ցաւ սա անձ, և իւր ազգասէր
յիշատիկական հրապարակ ե-
լաւ. Հայոց Հայրենասիրական
Միութեան փակաւ. գրեց-
խօսեցաւ. գոչեց ու պոռոչ
այդ Միութեան ի նպատու
հրապարակի վրայ հանդիսաւոր
երգումներ ըրաւ այսպէս:

«Անցեալ օր երբ իմ նորեկ
հիւրեր կը պատմէին ինձ այն
խոգթա ան գործողութիւններ
վերջէն որչափ զարմաւ առ
Աստուած և մի ուրիշ ըրաւ սուրբ
և յաւիտեական: Չնոյն ուրիշ
այն օր ի վեր իմ աղօթք ըրած
եմ և իմ կրկնեմ արտասուած եւ
զարութիւ առաւօտ, կէս օր եւ
երեկոյ: Չայն կը կրկնեմ այժմ
առաջի ձեր...»

«Կը հաւատամ թէ իմին կու-
գայ ինձ այս զայրուիլ եւ այս
ներշնչումը կը հաւատամ թէ ա-
ռաջի Գո այնպէս անհաճոյ է հա-
րատահարուցն տկար համբերու-
թիւնն որչափ զարմաւ է հա-
րատահարուցան անգամութիւն,
կը հաւատամ թէ իմին կուգայ,
Հայր, ի Քնն կուգայ ինձ այն
համոզում թէ կը պարտի կենաց
մնացեալ օրերն նուիրել Հայրե-
նակցաւ աղաւտութեան սուրբ
գործոյն: Կոխտեմ այժմիկ թէ
աներկիւզ պիտի աւնեմայն ՈՒՐ
զոր կը ցուցնեն ինձ, եւ ՅՈՐԴ
ՅԱՔ ՀԱՅՐԵՆԻՒՄ ՓՐԿՈՒՄՅԵՒ
ԵՐԲԵՐ ՎԱՐ ԶԻ ՊԻՏԻ ԴԵՆՍՄ
ԶՈՅՆ, ԵՐԲԵՐ, ԵՐԲԵՐ ԵՐԲԵՐ:
(Ուրհանդակ թիւ 3)

Այս եւ ասոր նման ուրիշ
շատ բաներ հրատարակուեցան
այն ատեն, եւ շատեր կարծե-
ցին թէ այդ անձ իւրօք Հայ
րենասէր մ'էր՝ նոր դարձի ե-
կած: Սակայն անոնք ատեն մը
հարկաւոր մը համար եւ երբ
հովերն ուրիշ կողմէ փչել սկը-
սեցին: Հարկ էր նորէն մտնել
մի և նոյն տեղն կամ նոյն
սահմանին մէջ ուսկէ սա նոյն
գուրս ցատկած էր երբեմն
ազգին ծառայելու համար:
Ուստի մեր անխաղած նորե-

րուկ աղգասէրն օր մը յանկարծ
կանգնեցաւ թերթի մը գլուխն
ու քարոզել սկսեց: Ահա իւր
քարոզածներէն մի քանի քաղ-
ուած, միայն գաղափար մը
տալու համար մեր հետաքը-
րեր ընթերցողներուն:

«Մեք, հիմնելով մեր կար-
ծիք պատկառելի հեղինակու-
թեանց վերայ, կը յայտարարեմք
թէ կայ եղանակ մի, և է մի
միայն հնարաւոր եղանակն,
Թուրք մեծ և հզօր ազգ մը ընե-
լու, Օսմանեան պետութիւնն իւր
կորուստէն փրկելու, Հայն և
Արաբն գոհ հպատակներ ընելու,
ցեղային դժուարութեանց պատ-
ճառն բառնալու, և Ռուսական
հզօր պետութեան ջով զման-
եան յարգելի և պատկառելի
գրացի մը ընելու: Օսմանեան պե-
տութիւնն վերակազմելու և փրկ-
ելու այդ եղանակն է զոր պիտի
բայտարարեմք մեր Գ. յօդուածով:

«Մեք այս յայտարարութիւն
կընեմք ոչ իւր պարզապէս ան-
գամ այն Հայ հատարակութեան
որ հինգ դարէ ի վեր Օսմանեան
հպատակ է, այլ և իւր Օսմանցի,
եւ չենք կարծեր

բաղադրւոյնք ունինք ամէն կողմէն ի վերջի տարրերը մեր հորիզոնին վրայ երեւցող և անյայտացող խորթիկներն թուենք, արդարացուցած կը լինինք մեր այս մասին բոլոր գործներն: Բայց այսու հանգեւրձ մեր նպատակը չէ ըսել թէ թերթերու առատութիւնն փնտռու է ազգին: Պարբերական հրատարակութիւնը ազգի մը պարզացման աստիճանի չափերն են, եւ հարկ է որ մեր ազգն ալ հարուստ լինի այդ մասին, բայց ոչ թէ հարուստ անձնական կիրքերու, կամ չափազանց ծնունդ առնող հրատարակութեամբ: Մէկը կըլինէ՝ և թերթ մը հրատարակելով ինքզինքն առաջնորդ կը կարծէ, եւ կատարէ ժողովուրդը որ օգնեն իրեն, վրաս զի թերթ ունի, որով ինքզինքն ազգին մէկը կը կարծէ: Բայց մը այս շահու նոր աղբիւրն տեսնելով նոյն ընելու կընէ, եւ այսպէս իրարու ետեւէ կը բաղձնան ինքնակոչ հովիւք, որք աւելի ոչխարին կաթն ու կըլը կը փնտռեն, քան անոր շահն ու ապահովութիւնն: Այո՛, մենք նախանձախնդիր ենք ազգային գրականութեան դարգացման, բայց հակառակ ենք այն լրագրիւններու որոնք խմբագրիւններն լոկ խմբագիր լինելու, չափու ու կրկն, և կամ զիւրիս զրարում մը ձեռք ձգելու համար հրատարակ կըլինէ՝ առանց որչափ ուղղութիւն մը կամ նպատակ մը ունենալու: Այո՛, հակառակ ենք այսպիսիաց, որոնք համար աւելի յարմար է կոչակարութիւն ընել քան ազգին ինքնակոչ վարիչներն ըլլալ: Այժմ՝ Ամերիկայի մէջ կան երեք, իսկ Եւրոպայի մէջ հինգ ազգային թերթեր, եւ կառուցելու թերթեր ալ այս մօտերս հրատարակ պիտի ելնեն, ո՛վ գիտէ թէ ինչ նոր ուղղութեամբ, Բայց, Աստուած իմ, խմբագրիւններով և թերթի կառուցումով պիտի կռուինք մեր թշնամուն դէմ: Եթէ այդ միջոցաւ փրկութիւն մը կրնայ լինիլ, թող օրօրացի մանուկն ալ գրիչն ձեռք առնու այսուհետեւ:

Եթէ կան գրու մարդիկ որք ազգին ծառայել կուզեն ու խմբագիր լինելու մէջ կը փնտռեն ասպարէզ, խորհուրդ կուտանք իրենց ըսելով թէ «այս խմբագրութեան սահմանն իրիտանի է, այլ ասպարէզն իրիտանի ընդարձակ է դէնքի, կուզի եւ զինուորութեան մէջ, ուր կարելի է գտնել ճշմարտ վառք, ու մշակելու համար անմշակ երկիր: . . . »

Խրատը քեզի, խելոք եմ ես, դրամ տուր ինձ դրամ, Ծով եմ, Ծով եմ, գիտեմ կարեմ ես ամէն բան: (Հայք) Մ. Ս. Կապրիէլ

— օ —

Թէ ուրիշ մը չ'տայ քեզի պատասխան, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ միշտ պատրաստ է ամէն բան Ըսել քեզի ճշիւ, առանց կեղծելու, Առանց ճիշդ ու ճշմարտը եղծելու:

Դու կըսես թէ «Մին կը պոռայ ես, ես, ես ես» Բայց ամէն մարդ գիտէ, եղբայր, այդ դուք ես, Դու ըսած ես թէ խելոցի հայր, ամէն, Մէկը չ'կայ քեզի նման ազգաւոր մէր:

Դու շատ անգամ ըսիր մեզի թէ ծով ես, Գիտութիւններ գիտես լեզուա շատ պէտքէ, Բանաստեղծ ես, լեզուագէտ ես մեծ հրետոր, Դրամ սակայն քեզ կը պահի ամէն օր:

Բայց քան գիտցիր թէ Հայք չ'ունին քեզ տալու Ոյժ կամ ստակ քեզ քաջակեր ըլլալու: Զի ամէն ոք գիտէ թէ քո վատ ճամբան, Միշտ վտանգ մ'է Հայոց ազգին գերեզման:

Արդ քեզ խրատ կուտամք թողլով դատարկ, Երթալ քաջուր խելիկ մէջ պարզապէս Բաւել հոն տեղ քո յանցանքներ բարձրան: Որք մեր դատին վրաս տուին սորազան:

« Կը լսենք թէ քանի մը Հայեր մտալիք են շնորհակալութեան գիր մը յղել Պարսի Ծահլիս: » Արարատ

— օ —

Եղբայր Արարատ, Պարսից վեհ. Ծահլիս շնորհակալութեան գիր մը գրողներն մի քանի անձինք չ'են» որպէս կը կարծէք դուք, այլ Միացեալ Նահանգաց Հայ Գաղթականութիւնն է: Այս մասին ի հարկէ պիտի կարդաք լրագրոյն ներկայ թուին մէջ, եւ պիտի տաք մեզի իրաւունք երբ ուղղելով ձեզ մեր խօսքն ըսենք:

— Սիրելի պաշտօնակից, այսպիսի լուր մը ազգի չ'է որ հրատարակ դենք առանց ազգի առաջնորդ, որպէս զի «յոնք չ'են լսելու տեղ աչք կուրցնելու» դժբաղդ հարկին մէջ գտնուելէ զերծ լինիք:

ՄԱՀԱԳՈՅԺ

Տիար Տ. Էքսէրճեան որոյ համբաւն ծանօթ է արդէն նկարչական աշխարհի մէջ Օգոստ. 31ին կընքէ իւր մահկանայնութիւնը: Դուքան հիւանդանոցին մէջ: Հիւանդութիւնն էր թոքախտ, որմէ կը տուապէր հանգուցեալն երկար ատենէ ի վեր:

Տ. Էքսէրճեան ծնած է ի. Կ. Պոլիս քառասուն եւ ինն տարիներ առաջ, իւր մանկական հասակէն նա ճաշակ և յարմարութիւն ունէր գծագրական արուեստին, որն ուսում ի փարիզ անուանի նկարիչ ժամն Լէօն Ժերոմի քով: Փարիզն թողլով երիտասարդ նկարիչն Պ. իս քնաց, ուր գծագրութեան ուսուցչակալ եւ աւելի ինչպէս նաև վարիչ աղջկային զանազան պաշտոններ:

Սակի իւր տարտ տարի առաջ հանգուցեալն իւր եղբոր Գառնիկ Էքսէրճեանի հետ, որ հիմա Պոսթընի մէջ անուանի նկարիչ մ'է, Նիւ Եորք եկաւ, ուր հաստատուած էր այդ թուականէն ի վեր: Իւր ընտիր գործերն անուն եւ համբաւ տուին Հայ նկարչին որոյ մի քանի նաշնը Ս. քառնիմ անուն թանկարանի մէջ ի ցոյց դրուած լինելով գնահատուեցաւ տեղացի մասնագէտներէ:

Տ. Է. ԲԱՍՏԵՐՃԵԱՆ

Տ. Էքսէրճեանի գործատեղին 14րդ փողոցին վրայ էր, 38րդ Ալլընիւի մօտ, քաղաքի ամենանշանաւոր մէկ տեղն, ուր Հայկական Միութեան Գործադիր Ժողովներն եւ Յանձնարարներն բազմաթիւ ժողովներու գումարուանքն ունեցան:

Հանգուցեալն աւելորդ է ըսել թէ Հայկական Միութեան Գործոն անդամներէն մին եղան էր ի սկզբանէ ի վեր: Թէն ինքն կը ծառայէր ազատական գաղութարներու, բայց հրատարակաւ չէր արտայայտէր այդ:

Հանգուցեալն թաղուած տեղի ունեցաւ մահուանէ մէկ օր վերջ: Յուշարկաւորութեան ներկայ էին շատ մը բարեկամներ, ինչպէս նաև իւր եղբայրն ու դուստրը, եւ եթէ Հայ ժողովուրդը իր կախաւ տեղեկութիւն ունեցած լինէր, անտարակոյտ աւելի հոգ քաղցնէր ինքն մը պիտի երթար իւր վերջի յարգանքներն մատուցանել հայ ննջելոյ յիշատակին:

Հանգուցեալը կը թողու իւր այրի ամուսնոյն հետ երեք դուստրներ որոնք գործունէն հաս կը գտնուի այժմ, եւ կրտսերն քեզ ատենէ վերջ Նիւ Եորք կը հասնի հօրը քով գալով սին յոյսով:

Օգոստոս 21ին Մահու տապարն մի այլ ծաղիկ ալ քաղեց Փարիզի մէջ Հայ Գաղթականութեան մէջին Դոմարդ զոհն էր Պ. Թովմաս Թէմիսեան անուն 18 ամեայ Տիգրանակերտցի պատանի մը որ քանի մը տարի առաջ Սևրիկայ եկած էր բաղդ շինելու յոյսով: Հանգուցեալն մարմինը հետեւալ օրը հիւանդանոցին իւր բնակարանը փոխադրուեցաւ և թաղումը տեղի ունեցաւ կիրակի օր օգոստ. 25ին: Հանգուցեալն հիւանդութիւնն էր «թիֆ» որոյ ճիւղներէն բժշկութիւնն կարող եղած էր ազատիլ անբաղդ պատանին: Ահա չ'այսպէս կը թառամի եւ կը փոխի Հայութեան նոր աշխարհի մէջ, ճիշդ այնտեղիկն նման որ օտար հողի մէջ չի կրնար ապրիլ երկար ժամանակ:

ՄԵՇ ԱՐԿԱՄԻ Ի ՓԱՐԲ ՓԼԵՅՈ

Օգոստ. 22ին, Եւրոպայի միջնորդ, Գաղաքի փարք Փլեյսի 68, 70, 72, 74 եւ 76 թիւերն կողմ հինգ յարկեայ հասցէները ճարձատեղով մէկ ակնթարթի մէջ հիմնահատակ եղաւ իր փլատակաց կոյտին տակ ծածկելով ոչ միայն անթիւ հարստութիւն այլ նաև բազմաթիւ անձանց մարմիններն:

Արկածն աւելի ահաւելի լիւրջ էր մնայն: Որոյ բոլոր յարկերն բռնուած էին զանազան գործերով, եւ կը կրէին ծանր մեքենաներ: Միայն երրորդ և չորրորդ յարկերու մէջ կային 12է աւելի տաղարկան մամուլներ որք կը կռնէին ու թառու թոփէ աւելի բացի թղթի, երկաթի և այլ ծանր նիւթերու զեղերէն որք պահուած կային տաղարանի, ձուլարանի և այլ գործերու յատկէն:

Աւելորդ զոհերու ցուցն էր ըսել թէ արկածը պատահելէ քիչ վերջ հրէջ մեքենայք հասան օդնութեան: Մէկ րոպէ վերջ ըրի հեղեղներն թափել սկսեցին կատաղի բոցերուն վրայ: Կոխը երկար տեւեց, բայց վերջապէս կրակն յաղթահար տեղի տուաւ ջրի զօրութեան:

Հրդեհի կենտրոն անմիջապէս յետոյ «կրակի» պաշտօնեայք փրատակաց մէջ որոնել սկսեցին մեքենայք զիւրիներն: Մինչ երեկոյ աշխատելով հարկը կարողացան սոքա 6 մարմիններ դուրս բերել ահալին ծանրութեանց տակէն:

Ահաւելի որոնումն երեք օր եւ երեք գիշեր տեւեց: 61 դիակներ դուրս բերուեցան այդ դժոխային



ՀՐԴԵՀԻ ՏԵՍԱՐԱՆԵՆ, ՓՐԵՍ ԼՐԱԳՐԵՆ ԱՌՆՈՒԱՄ

նկու համար կրակն ալ ընկերացած էր անոր, որոյ ծուխն միայն բաւական էր անբաւ փնտ պատահուել: Ուստի կարծեցին ի սկզբունք թէ կրկնայ մը պայթած ըլլալու էր անկալ շէնքին մէջ, բայց քննութիւններէ վերջ հաստատուեցաւ որ արկածին բուն պատճառը շէնքի խախտումն էր:



ՀՐԴԵՀԻ ԵՒ ՓԼԵՅԱՄԵՅ ՏԵՍԱՐԱՆԵՆ, ՓՐԵՍ ԼՐԱԳՐԵՆ ԱՌՆՈՒԱՄ

ՊԱՏԱՍԽԱՆ

«Հայք» ի վերջի մէկ թուին մէջ Տ. Ս. Ս. Գաղթիւնեան կամ Մ. Ս. Կապրիէլ բանաստեղծութիւն մը գրած է վերջերս «Բողոք» վերնագրով: Այս բանաստեղծութեան մէկ մասն կարատասպենքի ստորեւ, առանց սակաւն ըսելու թէ ո՛ր գործիչին եւ կամ ինչ նպատակի համար գրուած է այդ տողերն, զի գիտենք թէ մեր ընթերցողք պիտի հասկնան զայն գիւրութեամբ:

«Մին կըսէ ես, իսկ միւսն պոռայ ես, ես, ես, ես, Ոչ խելոցի, ոչ ազգասէր կայ ինձի պէս»

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՈՒՆԴԵՐ

Արարատեան Գունդն Հայ երիտասարդաց Թանգարանի Միութեան հետ միացնելու քանգեր կը լինին այժմ, եւ յոյս կայ որ պիտի յաջողի:

ՃԵՐԶԻ ՍԻԹԻԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ

Ճէրզի Սիթիի Հայկական Միութիւնն որ քայքայուած էր բաւական ատենէ ի վեր, ունի քառասուն տղարի չափի դրամ իւր Գանձապետի քով մնացած: Վերջերս ընկերութեան այժմեան անդամաց որոշմամբ այդ գումարն Թանգարանի Միութեան յանձնուեցաւ:

ԱՐԱՐԱՏ ԵՒ ՀԱՅԲ.

Ընթերցողք գիտեն անշուշտ թէ քաղաքի մէջ կը հրատարակուին ուրիշ երկու Հայ թերթեր եւ, Արարատ և Հայք անուանով: Սոցա առաջինն որոյ խմբագիրն է Տ. Ալիստեան, առջի օրէն ի վեր չէր գրէր մը բոնած էր տեղական ազգային գործոց մէջ, իսկ Հայք, ինչպէս յայտնի է ամենեւեց իր առջի թուին Սպարիկայի զեղերէն հիւանդանոցէն ընթացք, որոյ մասին այդ թերթի շատ անգամ գրած է արդէն, բայց Արարատ միշտ լուռ եղած կը գիտէր այս ամէն: Եւ իւր այս չէր գրէր իր քան քառամ պատճառք Հայ ժողովուրդին, Բայց վերջապէս ուրախ եմ թէ թէ «Արարատ» իւր վերջի թուով ըզգացած ինքեղ ժողովուրդի ցատուն, մի խմբագրական հրատարակեց Հայքի խաղաղութեան թեմայի վերջի թուով ըսաւ ինչ որ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ըսած է շատ անգամ: Արարատի այս քաջութիւնը գովելի է. եւ կը փութանք այս մասին շնորհաւորել անոր խմբագիրն՝ յուսալով որ այսուհետեւ այսպիսի գործերու մէջ եթէ ոչ առաջինն գլխի ամենէ վերջինն չի պիտ լինի Արարատ իւր ձայնն բարձրալսելու:

— Լսած եմ որ ծխախոտին մէջ միջոցաւ բնաւ չի գտնուիր, իրաւ է: —

— Այո՛, և չեմ ալ զարմանար, որովհետեւ միջոցներն անգամ զոտեն թէ ծխախոտն իրիտանի մասկար տեղ մըն է իրենց համար:

— Ո՛հ որչափ տեղեղ և ատեղի ձեր գերեզմանատունն եւ եթէ —

— Հոգաւորով մը ձայն) երբեք, սխալ է բոլորովին, եւ չեմ համարի, հոս գերեզմանի մը մէջ անմիտութիւն, այնուհետեւ բնաւ չի պիտի ուզէր փոխել ձեր տեղը: —

— Երկար ճամբորդութեանց մէջ զգնութիւն չըզգալու համար յաղաղարակից ուղիք ի՞նչ մը ունեն իր: —

— Երբ պիտի սկսին Հայկական Միութեան հանձնարարներն: —

— Երբ բանագրութիւնք անձանց ցուցակ մը պատրաստուի: —

— Ի՞նչպէս ընեն որ Հայկական Միութեան մէջ ուղարկութիւն գրաւար: —

— Կամ շատ խօսէ և կամ խօսանք ստափա կուլիւններն: —

— Կայացուր ժողովներուն մէջ: —

142,857 թիւը խիստ հետաքրքրական է արդարեւ: Եթէ զայդ 1ով, 2ով, 3ով, 4ով, 5ով կամ 6ով բազմապատկելու լինինք միևնոյն թուանշաններ կուենանք՝ միայն տարբեր կարգաւ շարուած: Եթէ 7ով բազմապատկենք նոյնը կուենանք՝ միայն 9ը թուանշաններ: Օրինակ. եթէ 142,857ը 1ով բազմապատկենք նոյնը կուենանք, եթէ 2ով բազմապատկենք կուենանք՝ 285,714 որ նոյն թուանշաններն կը պարունակէ: Եթէ 3ով բազմապատկենք, պատասխանն կը լինի 428,571. Եթէ 4ով բազմապատկենք կուենանք 571,428. Եւ թէ 5ով բազմապատկենք կուենանք 714,285. վերջապէս եթէ 6ով կատարենք գործողութիւնն կուենանք 857,142. Եթէ նոյնն 7ով բազմապատկենք քանորդինն է 999,999. Եւ եթէ 8ով բազմապատկենք նոյն 142,857ը քանորդին կը լինի 1,142,856. Եւ եթէ այս կարգի տալին թիւը այսինքն 1ը վերջի թիւին այսինքն 6ին վրայ գումարենք, կուենանք մի եւ նոյն 142,857ը նորէն:

Մի մոռանաք յառաջիկայ չափաք երկուցեան Հանդէսը որ պիտի սկսի ժամը եօթն ու կէսին ու պիտի վերջանայ հիւս 10, 30ին:

